Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10750

ՊԱՅՔԱՐԵՆՔ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿՄԻ ՀԱՄԱՐ!

ԿՌՎԵՆՔ ՀՆԳԱՄՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ



ЗКИОП
9-34

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏ., ՄՈՍԿՎԱ 1931

10250

ЗКТОП
Գ-34

14 MAR 2013
09 DEC 2009
24 SEP 2006

Ս. ԳԱՐԲՈՒԶՈՎ

ДЕВЛ. ТОСБИБЛИОТЕКА Т.С.С.Р.
Инв. 262 1

ԿՈՎԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Մեծահասակ
դպրոցականների համար

Türkmenistan
DEVLET
Kitap hazynasy
7
Туркменская
государственная
библиотека

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ
1931

Թարգմ. Ե. Ռ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ական ՍՍՀ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
43334.63

Главлит № А-77166 Зак. № 2863 Тираж 8.000
Книжная ф-ка Центриадата Народов СССР. Москва, Шлюзовая набережная, 10.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք մեր յերկրում պրոլետարական դիկտատուրա հաստատած գվարդիայի վոլսարինոզներն ենք։ Մենք կոչված ենք մեր ուժերի չափ մասնակցություն ցույց տալ սոցիալիստական շինարարությանը։ Իսկ դա մեզ վրա շատ պարտականություններ է դնում։ Ամենից առաջ դա մեզ պարտադրում է առաջ նայել, տեսնել թե ինչպես է աճում և զարգանում պիոներական կազմակերպությունը, ինչպիսի նոր խնդիրներ է առաջադրում նրան կյանքը։ Մենք պետք է ժամանակին սպառազինվենք, վոր յետ չմնանք կյանքից, վորպեսզի այդ խնդիրները մեր աշխատանքներում հաջողությամբ լուծենք։

Ինչը մեզ սովորեցնում եր, վոր ղեկավարելու արվեստը, կառավարելու արվեստը

կայանում է նրանում, վորպեսզի կարողանանք ամեն անգամ ձեռք գցենք հերթական և վճռող ողակը։ Պիոներական կազմակերպության կարևոր խնդիրներից մեկը այժմ հանդիսանում է պիոներների և բոլոր յերեխաների՝ սոցիալիստական շինարարության մեջ մասնակցելու ծրագրերի և ստուգիչ թվերի կազմումը։

Թե ինչու, — այդ մասին կիմանաս՝ կարդալով այս գրքույկը։

Չի կարելի Խորհրդային Միության ջոկատների կամ նույնիսկ առանձին (քաղաքային, գյուղական) ջոկատների համար ստուգիչ թվեր կազմելու միատեսակ կանոն ստեղծել։

Ցեվ պետք էլ չեն այդպիսի կանոններ։ Չէ՞ վոր ստուգիչ թվերով չի կարելի վորոշել ձեզ շրջապատող կենդանի կյանքում հանդես բերած ձեր մասնակցությունը։ Իսկ կյանքը բազմապիսի բարդություններ ունի։

Կոլխոզում, խորհրդային տնտեսության մեջ, փոքրիկ քաղաքում, խոշոր արդյունաբերական կենտրոնում, բոլոր ձեռնարկություններում, արդիֆինպլանների կատարման և գերակատարման համար պայքար է մղվում։ Բայց մի գործարանում գործալքումների վերացումն է հարցը վճռում, յերկրորդում ռացիոնալիզացիան, յերրորդում բռակի տոկոսի պակասեցումը։ Ցեվ պարզ է, վոր պիոներների անելիքներն էլ այդ բոլոր ձեռնարկություններում տարբեր են։ Տարբեր կլինեն նաև ստուգիչ թվերը։

Դու այստեղ կկարդաս, թե ինչպես պիոներական ջոկատը սկսեց ստուգիչ թվեր կազմել, հարմարեցնել դրանք միջավայրի առանձնահատկություններին։ Հիշիր, վոր դա միայն որինակ է այդ աշխատանքը սկսելու համար։ Այստեղ լիովին չի ընդգրկված պիոներ-կազմակերպության վողջ բազմապիսի աշխատանքը և դրա համար էլ այս նյութերից ոգտվիր, վորպես որինակից։ Այդ

նշանակում է, որ քիչ է միայն այստեղ գրածը կարդալ։ Կարդալով ամեն գլուխ, ամեն միտք, համեմատիր քո ջոկատին և քեզ շրջապատող միջավայրին, և միշտ հարց տուր քեզ. «Իսկ մեզ մոտ ինչպես է», «Ինչպես պետք է մեզ մոտ վարվել»։

Գրքույկը պիտի ոգնի քեզ և քո ջոկատին՝ կազմելու անելիքների ծրագիր, սոցիալիստական շինարարությանը ձեր մասնակցությունը հանդես բերելու ծրագիր։

ԾԱՆՈԹԱՆԱՆՔ

Ցեթե բարձրանում ենք այն բլրի վրա, որ գտնվում է գլխավոր փողոցի ձախ կողմում,— ողջ գործարանը և ավանը ձեր առաջն է փռվում, կարծես ձեր ափում լինի։ Մեջտեղում լայնաձիգ տարածվել է հավաքարար ցեխը։ Դա գործարանի կենտրոնն է։ Այստեղ բոլոր մյուս ցեխերից հորդում են առանձին մասեր և մասնիկներ, վորպեսզի միանալով իրար, դուրս գան հավաքարարի յետևի դարպասներից, վորպես շողշողուն և նոր շոգեմեքենաներ։

Աջից սևին է տալիս չուգունաձուլարանը։ Գիշերը նրա հնոցի յերախից դուրս են պոռթկում կայծերի խրձեր, վորոնք յերեխաների համար շատ հետաքրքիր տեսարան են ներկայացնում։

Զախից կիսաշրջան ձևով ձգված են զանազան ցեխեր,—մեխանիկական, մոդելային, դարբնոցային և հենց նորերս կառուցված պողպատաձուլային ցեխը։

Հենց մուտքի մոտ գործարանի սիրտն է,—էլեկտրոկայանը։ Էլեկտրոլարերի միջոցով դեպի բոլոր ցեխերը հոսում է էլեկտրական հոսանքը, որը շարժում է չուգունաձուլարանի բարձրացնող վիթխարի ծորակը, դարբնոցի յերեք տոննանոց շոգեմուտքը և մեխանիկական ու մոդելային ցեխերում անթիվ մեքենաներ ու ստանոկներ։

Պատին խփված է սոցիալիստական մրցության ընթացքը ցույց տվող դիագրամմը։ Սավառնակի վրա հպարտ նստել է մեխանիկական ցեխը։ 103,7%-ով արդիականացնելը իրագործել են,—ահա նրանց վերջին արդյունքը։ Մեխանիկականից հետո գործիքայինն է, նրանից հետո չուգունաձուլայինը,—վերջում դանդաղ քարշ է գալիս դարբնոցայինը։ Սև գույնով գրված է 73%։ Առանց ասելու յել

հասկանալի յե, որ ցեխը արդիականացնելը կատարել է միայն 73%-ով։

Գործարանի քարե պատնեշից անմիջապես այն կողմը սկսվում են բանվորական ավանի յերկար յերկհարկանի տները։ Նեղ պատուհաններ, կեղտոտ սանդուխքներ, մութ միջանցքներ,—այս բոլորը հին գործարանատիրոջ ժառանգությունն են։ Իսկ գործարանից ավելի հեռու, գետակի ափին վեր են նայում յերեք նոր շենքեր, որոնք հանդիսանում են նոր բանվորական ավանի կառուցվելիք յերկու տասնյակ շենքերից առաջինները։ Նրանցից մեկում բանվորական ակումբն է կահավորված։ Այստեղ ևս, վոչ հեռու, մեծ տան մեջ տեղավորված են գործարանային մասուրները։ Գործարանին մոտիկ հին և նոր ավանների միջև՝ դպրոցն է։

Վերջին վայրը, որ մենք միասին պիտի դիտենք,—դա... գերեզմանատունն է։ Մի՛ք զարմանա։ Ցերկար, ստվերոտ ծառուղու վերջում գործարանային յերիտասարդության

զբոսանքների սիրած տեղում կանգնած է յեկեղեցի, — այսինքն առաջ այդտեղ յեղել է յեկեղեցի։ Այժմ նրանում տեղավորված է պիոներական ակումբը, վորում աշխատում են գործարանային յերեք ջոկատների 100 պիոներները, ավելի ճիշտ՝ ակումբը նրանց շտաբն է հանդիսանում, քանի վոր պիոներները աշխատում են և գործարանում, և դպրոցում։

Ի՞ՆՉ Է ՄԵԶ ՊԱԿԱՍՈՒՄ

— Այսպիսով, ամփոփելով արդյունքները, պիտի ասել, վոր մենք կուսակցության 16-րդ համագումարին արած մեր խոստումը կատարեցինք և ճեղքվածքը վերացրինք 101,2%-ով։ Արդիֆինպլանը կատարված է, — ահա մեր վերջին հաղթանակը, — վերջացրեց իր ճառը գործարկոմի նախագահը։

Ակումբի դահլիճը լի յե բանվորներով։ Առջևի շարքերում իրար վրա լցված են պիոներները։

— Վասյա, — դիմում է մի պիոները մյուսին. — ուրեմն մեր աշխատանքը ճեղքվածքի վերացման գործում վերջացել է։

— Ել ինչ աշխատանք, յերբ ճեղքվածքը ինքը վերացվել է։

— Ախոռ. ինչ հետաքրքիր, ինչ հեռանդով աշխատում եյինք։

— Ի՞նչն ես ափսոսում. այն վոր արդիֆինպլանը կատարեցինք։

— Ախր չէ, — հետաքրքիրն այն եր, վոր ջոկատի միջոցով գործալքումների հաշվառում եյինք կատարում, արդիֆինպլանի կատարման հաշվառումը ցեխերն եյինք տանում և եղպես ուրիշ շատ հետաքրքիր բաներ... Իսկ հիմա ելի մեր հավաքույթները պիտի սկսեն ձանձրալի և տխուր դառնալ։

Մտքերի փոխանակության համար առաջինը հանդես յեկավ բանվոր-մոդելշիկ Աջաֆանովը։

— Հիմի մեզ համար ամենից վտանգավորը՝ դա հաղթությամբ բավականանալ և

ձեռքերը ծալելն է։ Մենք պիտի հիշենք, վոր հաղթանակը ձեռք բերինք պայքարով և վոչ մի բոպե չի կարելի պայքարը դադարեցնել։ Սմեն ինչ արդիֆինալանի գերակատարման համար, — ահա մի որվա մարտական կոչը։

— Տեսնում ես, Վասյա, նշանակում է մեր աշխատանքն էլ չի վերջացել և մենք էլ չպետք է պատերազմական վիճակից անցնենք խաղաղ վիճակի։

— Հա, բայց ախր եդ աշխատանքը մի ամբողջ տարվա, — ինչ մի տարվա, ամբողջ հնգամյակի աշխատանք է։

— Ցեվ մենք պիտի ամբողջ ժամանակ լարված աշխատենք, քանի վոր մենք պայքարում ենք հնգամյակի համար։

— Բանվորների գործը լավ է։ Նրանք թվեր ունեն, ծրագիր ունեն, գիտեն այսորն ինչ անել, վաղն ինչ, — իսկ մեր ջոկատում մի բան անում ենք ու չգիտենք դենը ինչ պիտի անենք։ Մի բան կա, վոր պակասում է մեր աշխատանքում։

— Պարզ է թե ինչ։ Հենց ինքդ նոր մեզ համեմատեցիր բանվորների հետ։ Մեզ պետք է նույնպես կազմել մեր արդիֆինպլանը, վորպեսզի ամբողջ տարով իմանանք ինչ անել, ինչին պատասխանել։

ԱՌԱՋ ՆԱՅԵԼ

Բազայի խորհրդում այսոր մի հարց կա. «Սոցիալիստական շինարարության մեջ մեր բազայի մասնակցության ստուգիչ թվերի կազմումը»։

— Ընկերներ,—սկսում է կոլվարը,—յես հիմա պիտի խոսեմ այն մասին, ինչի մասին հաճախ մտածել են մեզնից շատերը և վորի մասին մեր մի քանի ողակները արդեն խոսել են։ Մեր աշխատանքներում շատ պակասներ կան։ Իլյիչը մեզ սովորեցրել է, վոր «բանվորների և գյուղացիների հետ աշխատելով միայն կարելի յե դառնալ իսկական կոմունիստ»։ Մենք աշխատում ենք

կատարել այդ պատգամը։ Մեր կուսակցության և կոմսոմոլի հետ և գործարանի բոլոր բանվորների հետ մեր քաղաքն կռվեց արդ-ֆինպլանի իրագործման համար և յեթե 16-րդ համագումարի նախորեյին արդֆինպլանը իրագործված է 101,2%, ապա մենք կարող ենք հպարտությամբ ասել, վոր դրանում մենք էլ մեր մասնակցությունն ենք ունեցել։ Բայց ցավը ինչո՞ւմն է։ Մտիկ տանք մեզ։ Մենք կարծես արդեն սառել ենք։ Պայքարը արդֆինպլանի համար դեռ չի վերջացել, նա դեռ շարունակվում է, իսկ ցեխերում էլ պիոներական կենդանի լրագրեր չկան, վորոնք հարվածեյին թամբալներին։

— Ի՞նչ է. մենք ամբողջ ժամանակ պիտի արդֆինպլանո՞վ զբաղվենք։

— Չէ. եդ չի պահանջվում, բայց մի ուրիշ բան է պահանջվում։ Հարկավոր է, վոր մեր մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ վոչ թե կամպանիա

լինի, այլ մշտապես շարունակվի, քանի վոր սոցիալիստական շինարարությանը ակտիվ մասնակցելով միայն մենք կարող ենք կոմունիստ դառնալ։ Ի՞նչ պիտի անել, վոր սոցիալիստական շինարարությանը մասնակցելու կամպանիայից անցնենք յերկարատև, սիստեմատիկ աշխատանքի։ Հարկավոր է վորոշել այն հիմնական վայրերը, ուր մենք պիտի աշխատենք մոտակա տարվա ընթացքում, և ճիշտ թվերով գրել թե վորտեղ ինչ պիտի արվի։ Ցեվ այդ կլինի սոցիալիստական շինարարության մեջ մեր մասնակցության թվերով պլանը։

Կոմունիստը միշտ առաջ է նայում։ Մեզանից յուրաքանչյուրը պիտի այսպես մտածե յերբ մի գործ է գլուխ բերում,— «Արդյոք յես այդ աշխատանքով մի փոքր ոգնեցի մեր սոցիալիստական շինարարության գործին։ Իսկ մենք հաճախ այդ մոռանում ենք։ Ա՛յ, մենք հավաքում ենք յերկաթի կտորտանքներ, վորոնք մեր գործարաններում ձուլվելով մեքենաներ են դառնում և ոգնում մեր յերկրին և գյուղատնտեսությանը։ Բայց մենք կարողանում ենք այդ բոլորը տեսնել և պատկերացնել։ Ձ՛ե, շատ հաճախ հավաքած յերկաթը մեզ համար ժանգոտ մետաղի կտորտանքներ են և ուրիշ վոչինչ։ Այդ դեպքում մեր աշխատանքը կոպեկ չարժե, քանի վոր այդ աշխատանքը մեզ չի դաստիարակում վորպես ապագա կոմունիստներ։

«ՁԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԻ ՑԵՐԵՎՈՒՄ»

— Եղ բոլորը դու, Սերյոժա, ճիշտ ես ասում, բայց ինչացու յեն եղտեղ ստուգիչ թվերը։

— Ա՛յ թե ինչացու յեն.—Ցերը վոր մենք մեր տարեկան աշխատանքը թվերով ենք վորոշում, ապա ամեն պիոներ, ամեն ողակ իր

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ
Туркменская государственная

ամենուրյա պարտականությունները կկապի այդ ընդհանուր թվերի կատարման հետ, իսկ մեր տարեկան թվերն ել անպատճառ կապված կլինեն գործարանային հնգամյակի թվերի հետ։ Այդպիսով ամեն մի պիոների համար ել հեշտ կլինի իր փոքրիկ գործերը կապել բանվոր դասակարգի վողջ պայքարի հետ։

— Ճիշտ է,—ձայն տվեց յերկրորդ ողակի ողակավար Վանյան,—յես կուզեյի ավելացնել մի բան միայն։ Ցեսյերեկ հայրիկիս պատմեցի թե մենք պիոներներս ինչեր ենք արել, իսկ նա գլուխը որորելով ասում է,—«Ձեր աշխատանքը ինչ վոր չի յերևում»։ Իսկ յերբ մենք մեզ վրա պարտականություն վերցնենք վորոշակի թվերով՝ եղ դեպքում ամեն մի բանվորին ել պարզ կլինի, թե պիոներները ինչ բանի յեն ընդունակ, թե ինչ են անում նրանք։ Ցերբ մենք բոլոր աշխատանքները ջոկատների և ողակների միջև բաժանենք,—այդ դեպքում պարզ կլինի թե ինչի շուրջը պիտի մրցում կազմակերպել։ Դրանով մենք յետ մնացողների նկատմամբ կունենանք ընդհանուր հսկողություն և ընդհանուր ոգնություն։

Այսպես յերեխաները յերկար քննում յին այդ հարցը և վերջը խորհրդի որագրում գրեցին.—

«Իսկույն սկսել կազմել վողջ տարվա աշխատանքի ծրագիրը թվերով։ Պարզել թե ինչ կարող ենք անել գործարանում կուլտաշխատանքի և կենցաղի ասպարիզում։ Բոլոր աշխատանքները բաժանել ջոկատների միջև։ Նշել կատարման ժամկետները և պատասխանատու լինել գործի ճիշտ կատարման»։

ՋՈԿԱՏՆԵՐԸ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Առաջին ջոկատի արտակարգ հրավիրված խորհուրդը սկսեց գործի անցնել։

Վորոշվեց՝

Առաջին ողակին հանձնել արտադրության լավացման հարցում ակտիվ մասնակցու-

թյուն ցույց տալու գործը։ Ողակը պետք է ոգներ արտադրական խորհրդակցություններին, ռացիոնալիզացիայի բրիգադներին և պիտի հավաքեր բանվորների առաջարկները և այլն։

Չերկրորդ ողակին հանձնել կուլտ-աշխատանքը։

Չերրորդ ողակին՝ յերևան հանել գործարանում յեղած բոլոր հնարավորությունները՝ պիոներներին արտադրական աշխատանքին մասնակից անելու։

Չորրորդ ողակին հանձնվեց սոցմրցման շտաբին ոժանդակելու գործը։

Չեվ այսպես ամենքը, բեռնավորված աշխատանքով, սկսեցին գործել։ Ճիշտ այդպես սկսեցին գործի անցնել և մյուս ջոկատները։

Չեվ յեթե այդ որերին ձեզանից մեկը մտներ գործարան, կամ ակումբ և վերջապես ավանի ամեն մի անկյուն, կարող եր հանդիպել այսպիսի պատկերների։

Ցերեք պիոներներ պաշարել են գրադարանապետին.

— Ինչքան ընթերցող ունեք։

— Ինչքան գիրք կա։ Հերիք անում է բոլորին։ Բավականաչափ գրամ բաց թողնվում է։

— Ինչպես են աշխատում գրքատարները։

— Քանի՞ վագրովի գրքատարներ ունեք։

— Իսկ ինչպես կարող ենք մենք ոգնել գրադարանին։

Գրադարանապետը հազիվ եր կարողանում յերեխաների հարցերին պատասխանել։

— Դուք շատ բան կարող եք անել։ Մեզ մոտ ամեն տարի հարյուր գրքից յոթը կորչում են։ Բանվորները առնում են ու չեն վերադարձնում։ Ցեթե դուք յերբեմն-յերբեմն շրջելիք ընթերցողների տները և հավաքելիք,—այդ մեծ ոգուտ կլիներ գրադարանին և կուլտ աշխատանքին։ Ցեթե ձեզանից մի քանիսը գրքատարաթյան գործով զբաղվեն, մենք վագրով քիչ գրքատարներ կունենանք

և խնայած դրամով ավելի շատ գրքեր կգընեենք։ Դուք կարող եք մեզ ոգնել նաև բարձրաձայն ընթերցման և ուրիշ տեսակի գրքի յերեկոներ կազմակերպելու գործում։

Ցերեխաները զոհունակությամբ և ուշադիր կերպով լսում են և գրի առնում իրենց տետրերում։

— Դուրս ե գալիս վոր միայն գրադարանում ենքան աշխատանք կա, վոր հերիք կանի ամբողջ բազային։

ՑԵԽԻ ՎԱՐԻՉԸ ՃԱԿԱՏԸ ԿՆՃՈՏԵՑ

Ահա ձեզ մի ուրիշ պատկեր։

Մի քանի պիոներներ մտան ցեխի վարիչի մոտ։

— Ինչով կարող եմ ձեզ ոգտակար լինել,— ասում է վարիչը դառնալով նրանց,— ինչ գործով եք յեկել։ Եղ ինչի՞ յեք քթներդ եղպես լուրջ կերպով վեր ցցել։

— Վորվհետև լուրջ գործով ենք յեկել, — ասում է Լիզան։ Դուք ուզում եք, վոր մեզանից լավ բանվորներ դուրս գան։

Ցեխի վարիչը նման հարցումի չեր սպասում։

— Ի հարկե ուզում ենք։

— Ցերկու-յերեք տարուց հետո մենք բոլորս ել աշխատելու յենք գործարանում։ Ինչքան ուժ և դրամական միջոցներ են ծախսվելու մեզ վրա ֆաբրգործուսում։ Մինչդեռ կարելի յեր հիմիկվանից և ուսման ժամանակամիջոցը և ծախսերը կրճատել, յեթե...

— Ինչ յեթե, — ուղղակի ասա ելի, Լիզա։ Մենք ուզում ենք հիմիկվանից ծանոթանալ գործարանային կյանքին, դազդահների ու գործիքների հետ, վոր յերբ գործարան մտնենք՝ հեշտ լինի մեզ ուզած աշխատանքի դնել։

Վարիչը ճակատը կնճռոտեց։

— Դժվար խնդիր եք դնում իմ առաջ, յերեխեք։ Ցեպ ասենք համաձայն եմ, բայց... վոնց կարելի յե իրագործել։ Ձեզ ցեխ մտնել թույլ տանք՝ բա վոր մի դժբախտություն պատահեց։

— Վոչինչ ել չի պատահի։ Ենքան ել պստիկ չենք։

Հետո ախր ազատ դազդահներ ել չկան։ Խում չի կարելի բանվորներին դազդահներից կտրել։

Յերեխաները գնացին ցեխի բանվորների մոտ զրուցեցին և պարզեցին։

ՎՈՂՋ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՍՍԱՆ ԴՈՒՐՍ ԲԵՐԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՊԱՅՔԱՐԻՆ

Ողակները իրենց բոլոր տեղեկությունները ուղղակի տանում են խորհուրդ։

Խորհրդի քարտուղար Լենան բոլորը գրի յե առնում։ Վորքան շատ են այդ տեղեկություններն ու առաջարկները։

— Ես ինչքան շատ գործ կա անելու։ Մի տարի չե՝ իսկի տաս տարի յել չենք կարող կատարել բոլորը։

կկատարենք՝ յեթե 1000 մարդ ունենանք։

— Հա, բայց վորտեղից 1000 մարդ։ Մենք 180 հոգի յենք։

— Ենե, — եղպես խորհրդի քարտուղարը կլինեն։ Պատերին նայիր։ Տեսնում ես պիոներների որենքները։ Կարդա 13-րդ որենքը։

— «Պիոներ կազմակերպությունները բոլոր յերեխաներին միացնում են Լենինի դրոշակի տակ։ Պիոները բոլոր յերեխաներին որինակ պիտի լինի»։

— Տեսար. իսկ դու ասում ես՝ 180։ Մոռանում ես, վոր կան հարյուրավոր դպրոցական անկազմակերպ յերեխաներ, վորոնց մենք պետք ե դրավենք մեր աշխատանքների մեջ։

— Իսկապես վոր, Սենկա, — ճիշտ ես ասում։ Եդ բանը մենք բոլորովին աչքաթող եյինք արել։ Գնանք Սերյոժի մոտ։ Նա հիմի կոմյերիտական բջիջումն ե։

Բոլորը իսկույն իրար հասկացան։ Վորոշեցին իսկույն պատգամավոր ուղարկել աշկոմ, վորի միջուկը կազմում եր պիոներ կամ կոմյերիտական ակտիվը։ Ցեվ առանց հետաձգելու հարց բարձրացրին, աշկոմի նիստին քննության դրին։

Սենյան շատ մանրամասն կանգ առավ մեզ ծանոթ վորոշման վրա, ստուգիչ թվեր կազմելու մասին և ապա անցավ բուն խնդրին. —

— Մենք հրավիրում ենք բոլոր աշակերտներին միանալ մեր վորոշմանը և միասնական ուժերով ոգնել հնգամյակի գործին։ Այդ պատճառով առաջարկ եմ մտցնում աշկոմին անցնել այդ հարցի լայն բացատրմանը և բոլոր աշակերտությանը այս գործում ներգրավելուն։

— Դե, ընկերներ, քննենք պիոներների առաջարկը։

— Ի՞նչ քննել։ Պետք ե ընդունել հրավերը և գործի անցնել։

—Իսկ այդ աշխատանքները չե՞ն խանգարի մեր դասերին։

— Իհարկե վոչ։ Ընդհակառակը, դասերը լավ պատրաստելն ու առաջադեմ լինելը նույնպես հնգամյակի պայքարում մեր մասնակցությունն ցույց տալու մի ձևն է։

— Ցեվ հետո պիտի իմանանք, վոր մոտ կանգնելով գործարանին և մասնակցելով արտադրությանը, տարվող աշխատանքներին, մենք նույնպես ահագին բան կսովորենք։

Այսպիսով աշկոմը միաձայն վորոշեց ընդունել պիոներների հրավերը, իսկույն հավաքել խմբակների ընդհանուր ժողովներ և այդ վորոշումը կիրառել բոլորի ուժերով և մասնակցությամբ։

ՇՏԱԲԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է

Բազայի փոքրիկ սենյակը զինվորական շտաբի վերածվեց։ Իրար յետևից գալիս են պիոներները, աշակերտները նոր տեղեկություններով և առաջարկներով։

Ահա սենյակը մտավ յուղոտած բլուզով մի բանվոր։ Դժբախտաբար հասակավոր բանվորներն այստեղ հազվագյուտ հյուրեր են, այդ պատճառով ել յերեխաների ամբոխը շրջապատում է նրան։

— Ո՞վ է եստեղ ձեր մեջ ամենից գլխավորը։

— Ա՛յ, սա յե, — և յերեխաները առաջ հրեցին Սենյային։

— Ցես ՄՈՊՐ-ի բջիջից եմ. եդ ինչի՞ համար ձեր տղերքը մեզ մոռացության են տվել։ Մեզ մոտ ել ախր ձեզ համար ինչքան ասես աշխատանք կա։ Թե կարծում եք թե ՄՈՊՐ-ի աշխատանքը կարևոր չի։

— Նդտեղ մի քիչ մենք, իսկապես վոր սխալվել ենք, ընկեր։ Ախր մենք առաջին անգամն է, վոր ստուգիչ թվեր ենք կազմում, — արդարացավ Սենյան։ Դե ասեք, թե ինչ կարող ենք անել մենք պիոներներս ՄՈՊՐ-ի համար, վորպեսզի դրանք մենք մտցնենք մեր ստուգիչ թվերում և իրականացնենք։

Ցեվ հասակավոր բանվորը Սենյային ու բազայի խորհրդի անդամներին մանրամասն

բացատրեց պիոներների անելիքները, և Մուսյան ուշադիր կերպով լսելով նրան, գրի էր առնում այդ բոլորը։

Վերջում Վիտյան դուռաց.

— Տղերք, մի միտք էկավ գլուխս. տեսնում եք, թե բանվորները ինչքան ոգտակար են լինում մեզ իրենց խորհուրդներով։ Առաջարկում եմ գործարանային պատի լրագրի առաջիկա համարում հայտարարել, որ մենք մեր ստուգիչ թվերն ենք կազմում և խընդրենք բանվորներին, որ նրանք գան մեզ ոգնության, խորհուրդ տան թե ինչ անենք և այլն։

Բոլորը հավանություն տվին այդ մտքին։

Մի քանի որից գործարանային լրագիր «Շոգեմեքենագործ»-ում, առաջին սունյակի վրա խոշոր տառերով տպագրված եր.—

Ընկեր բանվորներ.

Պիոներները էկ մեր ավանի բոլոր էրեխաները վորոշել են դուրս գալ հնգամյակի համար մշտական պայքարի։ Դրա համար մենք վորոշեցինք կազմել սոցիալիստական շինարարության մեջ մեր մասնակցության ստուգիչ թվերը այս տարվա համար։ Մենք խնդրում ենք ձեզ ոգնելու մեզ այդ մեծ էկ լուրջ գործում։ Ցույց տվեք, թե ձեր կարծիքով վոր աշխատանքներն են ավելի հարմար մեզ, վորոնցով էկ գործը ոգտվի, էկ մեզանից ել դաստիարակվեն կոմունիստներ։

Առանձնապես, մեզ համար ոգտակար են ձեր ցուցմունքները — էրեխաների արտադրական աշխատանքի կազմակերպումը գործարանում։ Մենք ուզում ենք վաղ տարիներից աշխատել սովորել։

Բոլոր ցուցմունքներն ու առաջարկները հանձնեցեք պիոներական բազային։

Ավանի բոլոր մանուկների անունից՝

Պատանի Պիոներների բազայի խորհուրդ։

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԵԼ ՄԵՆՔ

Այսպիսի վերնագրով մի հաստ տետրակ կա դրված բազայի սենյակի սեղանին։ Նրա-

նում գրվում էին բոլոր ոդակների անելիքների գումարը։ Արդեն 37 եղից ավել գրված կար։

— Բաղայի խորհրդի նիստը համարում եմ բացված։ Այսոր բոլոր ջոկատները կպատմեն՝ թե ինչ է արված ստուգիչ թվեր կազմելու գործում։ Մենք բոլորս կարդացել ենք տեղեկագրերը, այնպես վոր կարճ ասեք, կանգ առնելով միայն հիմնական հարցերի վրա։ Դե առաջին ջոկատ, սկսիր։

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մեզ հանձնարարված էր պարզել, թե մենք ինչ կարող ենք անել գործարանում։ Առաջին հերթին մենք յերևան բերինք թե ուր կարող ենք իսկապես աշխատել, դազահների վրա, ցեխերում, այս կամ այն արտադրական առաջադրությունը կատարելով, վարժվելով աշխատանքին, և մեքենաների հետ վարվել իմանալով։ Սկզբում մեզ



այնպես թվաց թե վոչինչ չի կարելի անել, և վոր մենք ցեխում տեղ չենք կարող ունենալ։ Վարչությունը նույնպես այս կարծիքի էր։ Բայց հետո յերբ մենք սկսեցինք զրուցել բանվորների, կուսակցականների և վարպետների հետ, — տեսանք վոր եդպես չի։ Մեխանիկական ցեխում յերկրորդ հերթի ժամանակ մի քանի դազգյահները պարապ են։ Ցեխի վարիչը թույլ է տալիս հնգորյակում մի անգամ մի ողակի այնտեղ աշխատել։ Մեզ տալիս են հինգ դազգյահներ։ Այդպիսով մի ողակ, հինգ որը մեկ անգամ ապահովված է աշխատանքով։

Ճիշտ նման հաջողություն ունեցանք նաև գործիքային արհեստանոցում։ Վարչությունը հնգորյակում մի անգամ մեզ կտա 10 զույգ ճնշիչներ. 4 կոմսերիտականներ համաձայնվեցին մեզ սովորեցնել դրանց վրա աշխատել։

Վատ է բանը շոգեմեքենայի հավաքարարը ցեխում։ Մենք և մի քանի բանվորներ կարծում ենք, վոր մի ողակ կարող է աշխատել հավաքման գործում և ոգնել բանվորներին։ Իսկ այնտեղ աշխատելը շատ հետաքրքիր է։ Տեսնում ես թե ինչպես առանձին մասերից սարքվեց վիթխարի շոգեմեքենան, — պարապողը։ Բայց վարչությունը, գլխավորապես ցեխի վարիչի ոգնականը, ասում են, վոր պիոներներին ցեխում չի կարելի ներս թողնել։ Մենք կարծում ենք վոր վերջի-վերջո մեզ կհաջողվի համոզել վարչությանը։

Մեր աշխատանքի յերկրորդ մասը — դա այն է, թե ինչ կարող ենք անել մենք արտադրության շուրջը։ Այստեղ շատ գործեր կան։ Ամենից առաջ այն, ինչ մենք անում եյինք, մինչև հիմա, — արտադրական առաջարկների հավաքելը, բայց վոչ թե միայն հավաքել, այլ և մասնակցել՝ կյանքում նրանց կիրառելու գործին։

Մենք կարող ենք բոլոր ցեխերում բրակի տախտակներ կազմակերպել։ Այնտեղ մենք կկախենք փչացրած իրը և տակը

կգրենք թե ով է մեղավոր այդ բանում և ինչքան նստեց այդ փչացնելը ձեռնարկության։

Հիշում եք, որ յերբ մի անգամ մենք շաբաթորյակ կազմակերպեցինք ցեխում, թափվածքի միջից մենք շատ անհրաժեշտ իրեր և գործիքներ հանեցինք։ Այս տարի պետք է բոլոր ցեխերում 3—4 մասսայական շաբաթորյակներ կազմակերպել։

Մեզ շատ լավ ընդունեց և շատ աշխատանքներ է ուզում մեզ հանձնարարել սոցիալիստական մրցության գործարանային շտաբը։ Որինակի համար՝

— Ցեխերում սոցիալիստական մրցության ընթացքի հաշվառման տախտակ ունենալը։

— Ծնողների հետ կնքվող պայմանագրերում ծնողների՝ արտադրության հանդեպ ունեցած պարտականությունների մասին կետեր մտցնելը։

— Մրցողների դաղդյահներին անհատական ցուցանիշներ կախելը։

— Սոցմրցության ամենորյա տեղեկագրեր պատրաստելը,—ահա այն բոլորը, ինչ կարող ենք անել մենք։

Դուք յեղել եք մեր ցեխային կարմիր անկյուններում, նրանք անկարգ և անդուրեկան են։ Ինչքան ասես պլակատներ, նկարներ կան, բայց նրանք քաշ են տրված խառն ու անկանոն։ Մի՞թե մենք չենք կարող այդ անկյունները կարգի բերել, մաքուր և դուրեկան դարձնել։ Բայց բանը դրանումը չի միայն։ Մեր հերթապահները պիտի լրագրների ընթերցում կազմակերպեն անգրագետ բանվորների համար։ Չե՞ որ մենք գործարանում 300-ի չափ անգրագետներ ունենք։ Դպրոցական խմբակները, ջոկատները պիտի ինքնուրույն, գեղարվեստական յելույթներ կազմակերպեն կարմիր անկյուններում։ Մենք կարող ենք մամուլի լիազորներին ոգնել լրագրների և թերթերի տարածման գործում, պետք է



ցեխերում բաց թողնենք տասնյակ գրքատարներ։

Ցեռ այստեղ թվարկեցի մեր աշխատանքների գլխավոր կետերը միայն։ Հասկանալի է, որ ամբողջ աշխատանքի ընթացքում պետք է ձգտենք ինչքան կարելի է ավելի շատ բանվորներ և հարվածային բրիգադներ ներգրավել։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

— Ընկերներ, սկսեց յերկրորդ ջոկատի նախագահը, — կուլտուրական աշխատանքների ասպարիզում մենք այնքան շատ անելու բան ունենք, որ ինձ թվում է թե յերկու ժամ էլ որ խոսեմ, — չի պրծնի։ Դրա համար էլ կասեմ ամենից գլխավոր հարցի մասին։

Գործարանում 300 անգրագետներ կան։ Բանվորների կանանց և ազգականների մեջ կլինեն ևս 450 անգրագետներ։ Ուրեմն ընդամենը 750 անգրագետներ։ Լիկբեզները

միայն 300 մարդ և հաճախում։ Հիմիկվանից հարկավոր է ագիտացիա մղել անգրագետների մեջ և նոր խմբակներ ստեղծել։ Նրանց համար, ովքեր չեն կարող ընդհանուր պարապմունքներին գալ, պիտի կազմակերպել ինքնուրույն խմբակներ։

Մեզ մոտ ավանում 78 չափահաս ընկերներ կան, վորոնք վոչ կարող են դպրոցում սովորել, վոչ ֆաբգործուսում, վորովհետև համապատասխան պատրաստություն չունեն։ Եդ տղերանց համար պետք է շտապ կերպով նախատարրական դասընթացներ կազմակերպել, վորպեսզի հենց ես աշնանից նրանք կարողանան ֆաբգործուս ընդունվել։

Գրադարանը մեզանից ոգնություն է սպասում, գրքատարության գործը կազմակերպելու համար և՛ ցեխում, և՛ բանվորների տներում։ Մենք պետք է կազմակերպենք նաև բարձրաձայն ընթերցումներ, ագիտյերեկոներ և այլն։ Մենք պիտի ոգնենք գրադարանին գրքերի կորուստը վերացնելու։

Առաջ ակումբում մանկական սենյակ կար։ Ցերբ մայրերը յերեխաների հետ ակումբ եյին գալիս, նրանք կարող եյին յերեխաներին թողնել այդ սենյակում։

Այժմ դեկավարին կրճատել են, և սենյակը փակ է։

Մենք կարող ենք այնտեղ մի քանիսին ուղարկել, նորից բաց անելու սենյակը և մայրերին հնարավորություն տալ մանուկների հետ ակումբ գալ։

Մասուրների աշխատավորի գործը շատ դժվարացավ։ Ցերեխաներ շատ են, դեկավարներ՝ քիչ։ Ցեթե մենք մի քանի մշտական աշխատակիցներ տայինք մասուրին, ապա կարելի կլիներ ավելի շատ յերեխաներ ընդունել։

Մենք կարդացինք, թե ինչպես մի բարդյում պիոներները իրենք տեխնիկական կայան են ստեղծել։ Ցես կարծում եմ, վոր մենք ել եդպես մի բան կարող ենք անել։

Կարող ենք ճարել գործարանի համար անպետք՝ կահավորում, շենքն էլ ակումբում կճարենք։

Դպրոցում նույնպես մենք քիչ բան չունենք անելու։

Փոխոգնության խմբակների կազմակերպումով, յետ մնացածներին մշտապես ոգնելով մենք պիտի կարողանանք վերացնել յերկրորդ տարին նստելու յերևույթը։ Հիմա 600 դպրոցականներից ամեն տարի 90—100 հոգի յերկրորդ տարին նստած են մնում նույն դասարանում։ Ամեն մի աշակերտ տարին 85 ռուբլի յե նստում։ Ուրեմն մենք կարող ենք հենց այս տարի 3000 ռուբլի խնայել։ Այդ փողով կարելի յե դպրոցում մի լավ արհեստանոց սարքել։

Ահա այն հիմնական կուլտաշխատանքները, որոնք մենք կարող ենք կատարել այս տարի։

— Ընկերներ, ինչ է, արդեն հոգնեցիք։ Լավ, քիչ էլ համբերեք՝ ես է կվերջացնեմ։ Անցնենք վերջին ինֆորմացիային։ Վանյա, սկսիր։

ԱՎԱՆՈՒՄ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Սկսում են ավանից։ Նոր տներ են կառուցվում, փողոցները խճուղում են, իսկ շուրջդ փոշի և ցեխ է։ Քամին բարձրանա թե չէ,—փողոցով անցնել չի լինի։ Պետք է մեր ուժերով ծառատնկում անցկացնենք։ Ավանի խորհրդի բարեկարգման բաժինը հողաչափեր է տալիս։ Մնացածը մեզ վրա յե ընկնում։

Ցերեխաները դպրոցից գալով, ամեն տեսակի ֆնասակար խաղերով են զբաղվում։ Հաճախ էլ ձանձրույթից խուլիգանություն են անում։ Իսկ տների յետևում հիանալի բակեր կան, ուր կարելի յե խաղերի, հանգստի հրապարակներ կազմակերպել։ Վալեյբոլի ցանցը յերկարացնել, զուգափայտեր դնել և ահա հրապարակը պատրաստ է։

Մի քանի նոր բնակարաններում ավելի շատ աղբ կա, քան հներում։ Մենք, ինչպես գրված է պիոներական հավաքի հրահանգում՝

կարող ենք կեղտի դեմ կռիվ մղել, շաբաթորյակների միջոցով։

Մենք կոլեկտիվ կերպով կարող ենք բանվոր բանվորների ղեկավարությամբ՝ ռադիոֆիկացիայի յենթարկել մեր նոր տները։

Հարկավոր է ուտել հումույթի համար արկղեր պատրաստել և դնել բնակարաններում։ Ահա այն բոլորը, ինչ առաջարկում է մեր ջոկատը։ Գրքատարության, անգրագիտության վերացման, մասուրների մեջ տանելիք աշխատանքների մասին արդեն ուրիշները խոսեցին։

ՎՈՐՆ Ե ՀԻՄՆԱԿԱՆԸ

Դա առաջին կետն էր, որի առթիվ բակայի խորհրդում տաք վիճաբանություն սկսվեց։

— Բոլորը պիտի մտցնել ծրագրում, — ասում էր մեկը։ Ստուգիչ թվերը պետք է ընդգրկեն մեր բոլոր աշխատանքները։

— Վոչ թե բոլորը, այլ այն, ինչ վոր կարող ենք անել մի տարում։

— Սխալ է, ընկերներ։ Ստուգիչ թվերը, — աշխատանքի ծրագիրը չի։ Մենք պիտի մտցնենք ամենից գլխավոր և հիմնական աշխատանքներ։ Մնացած ժամանակ ողակն ել, ջոկատն ել, դպրոցական խմբակներն ել պիտի լրացնեն հասարակական աշխատանքը, ինչպես այդ հարմար կգտնեն։

> **ՎՈՐՈՇԵՑԻՆ**
>
> *Ստուգիչ թվերում մտցնել միայն գլխավոր, հիմնական աշխատանքները, վորոնք պիտի իրագործվեն մի տարվա ընթացքում։*

ԻՆՉՊԵՍ ԲԱԺԱՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

— Աշխատանքի մի մասը դպրոցը կվերցնի իր վրա, մի մասը ակումբը, մի մասն ել բական։

— Իսկ յեթե յես ջոկատումն ել եմ, դպրոցումն ել, և ակումբի յել անդամ եմ՝ ինչ է, պիտի յերեք տեղն ել աշխատեմ։

— Ցես կարծում եմ, վոր ջոկատը չպետք է առանձին աշխատանքներ վերցնե։ Պիոներները ամեն տեղ պիտի նախաձեռնողներն ու կազմակերպիչները լինեն։ Իսկ յեթե մենք մեզ վրա առանձին աշխատանքներ վերցնենք, մնացած յերեխաներից կկտրվենք։ Դպրոցականները առանձին կաշխատեն՝ մենք առանձին։

— Ել ինչով պիտի զբաղվի ջոկատը։

— Մենք պիտի քննենք թե ուր, ինչպես ե առաջ տարվում աշխատանքը և պիտի ղեկավարենք։

— Բարով ես եկել, — ծաղրանքով ասաց մեկը։ Ուրեմն մենք պիտի սկսենք խոսել և սպասել, վոր ուրիշները գործ անեն։

— Ճիշտ ե, վոր պիոներները պիտի ղեկավարեն, բայց դրանից բացի պիոները մի բան պիտի անի։

— Պետք ե մյուսներին որինակ տալ և որինակ վոչ թե խոսքով՝ այլ գործով։

ՎՈՐՈՇԵՑԻՆ

Ստուգիչ թվերը կատարելու աշխատանքը բաժանել դպրոցի, մանկական ակումբի յեվ բազայի միջև։ Բաց թողնել աշխատանքների տեղեկագիր, վորը յերեխաները կարողանային քննել, թե ինչպիսի աշխատանքներ են ուզում վերցնել իրենց վրա։ Պիոներական բազան անմիջականորեն իր վրա յե վերցնում ամենից ավելի կարեվոր աշխատանքները, բայց մնում ե պատասխանատու՝ ստուգիչ թվերի լրիվ կատարման համար։

Իսկ ինչը համարել գլխավոր և ինչը յերկրորդական։

Ինչ մտցնել ստուգիչ թվերում և ինչը չմտցնել։

Այդ հարցերի վրա յերկար մտածեցին յերեխաները։

Հրավիրեցին բազայի խորհրդի աշխոմի և ակումբի վարչության միացյալ ժողովը։

Յերկար վորոճացին ամեն մի աշխատանք, ամեն մի կետ։

Հարկավոր է այնպիսի աշխատանքներ ջոկել, վորոնք ավելի անհրաժեշտ են գործարանին, վորից շուտափելի և աչքառու ոգուտ ստացվեր, վոր բանվորները տեսնեին թե մենք վոչ թե խաղ ենք խաղում, այլ գործ ենք շինում։

— Զմռռանանք, վոր ամեն մի աշխատանք, ամեն մի գործ պետք է մի բան սովորեցնի մեզ և դաստիարակի մեզ ինչպես կոմունիստներ։

Տեսնում եք, թե ինչ լուրջ պահանջներ են առաջադրում տղերքը այն աշխատանքների նկատմամբ, վորոնք մտցնում են ստուգիչ թվերում։



Վերջապես կազմեցին աշխատանքների մի ցուցակ, որը բավարարում էր այդ պահանջներին։

Իսկ թվերը։

Ինչքան կարելի կլինի՝ կատարել։

Չպետք էր պակասեցնել, չպետք էր այնպես անել, որ ստուգիչ թվերի կատարելը մասնավորապես բան լիներ իր հեշտությամբ, բայց չէր էլ կարելի չափազանցնել, վերցնել այնպիսի պարտականություններ, որոնք հնարավոր չէր լինի կատարել, քանի որ ամեն մի պարտականության համար նրանք պատասխանատու են ամբողջ գործարանի առաջ։

Դրա համար էլ նրանք յերկար վիճում և քննում են յուրաքանչյուր թիվը։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Սենյայի ձեռքում մի թղթի կտոր կա, որը ամբողջապես գրոտած և ջնջոտած է։ Դժվար է մի բան հասկանալ դրանից։ Բայց Սենյան հեշտությամբ է կարդում բոլորը,

որովհետև յերկար վիճելուց և քննարկումից հետո նա գրեթե անգիր գիտի բոլորը։

Լսենք, թե ինչ է գրված նրանում։

ՇՈԴԵՄԵԳԵՆԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՐԵՔԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՍՏՈՒԳԻՉ ԹՎԵՐԸ

1930 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1931 թ. հոկտեմբերի 1-ի ժամանակում.

1. Վորպեսզի ստուգվի յեվ ապացուցվի գործարանում մանկական արտադրական աշխատանքի կազմակերպման հնարավորությունը, ջոկել պիոներների յերկու բրիգադներ մեխանիկական յեվ գործիքային ցեխերում։ Արտադրական խնդիրները պարզել յեվ մտցնել ստուգիչ թվերը։

2. Արտադրության ռացիոնալացման, կոռուսի դեմ պայքար մղելու մասին բանվորներից հավաքել մոտ 300 առաջարկներ. հետևելով, որ առաջարկներին ընթացք տրվի։

3. Բոլոր գեղերում բռակի ցուցափեղկեր կազմակերպել, վորում որեցոր հանդես բերել ինչպես բռակի պատճառները, այնպես էլ այն աշխատողներին, վորոնց շնորհիվ առաջացել է բռակը։

4. Անցկացնել տարին 4 անգամ մասսայական շաբաթորյակներ, գեղերը արտադրական խրամից յեվ թափուծից բեռնաթափ անելու։

5. Մենք մեզ վրա յենք վերցնում բոլոր գեղերում յեղած սոցմրցման տախտակների հաշվառումը։

6. Մանուկների ուժերով յերեք կարմիր անկյուն ցուցական դարձնենք։

7. Ամեն որ գեղերն ուղարկենք 10 մարդ անգրագետներին լրագիր կարդալու։

8. Կարմիր անկյուններում անցկացնել 200 գեղարվեստական, ագիտ-յելույթներ։

9. Գրքատարների բրիգադա կազմակերպել։ Պարտավորվում ենք 1500 նոր բաժանորդներ ներգրավել գրադարանի շուրջը, 10.000 գիրք տարածել, 1200 ռուբլու գրականություն վաճառել։

10. Խմբակների յեվ անհատական պարապմունքների միջոցով վերացնել 300 հոգու անգրագիտություն։

11. Մի բրիգադա ուղարկել մտուրներում մշտական աշխատանք տանելու։ Այդպիսով դադարեցնել մտուրների տեղերի թիվը։

12. Հենց այս տարի վերջ տալ յերկրորդ տարին նույն խմբակում մնալը դպրոցում յեվ խնայել այդպիսով 3000 ռ.

13. Ակումբային փականագործական արհեստանոցի միջոցով գործարանից ստանալ 950 ռ. հասարակ գործիքների պատվեր յեվ կատարել այն։

14. Դպրոցական հյուսնոցային արհեստանոցում մտուրների համար պատրաստել 18 տաբուրետկաներ, 7 սեղանիկներ, 6 դիվաններ յեվ 50 արկղեր ուտիլ հումքի համար։

15. Նոր տների ռայոնում տնկել 1.500 ծառ։

16. Նոր տներին 100 բնակարանում ռադիո անցկացնել:

17. Ուղարկել գյուղը մի բրիգադա՝ կոլխոզին ծանոթանալու համար, վորպեսզի նիշենք նոր գյուղի շինարարության իրական ոգնություն ցույց տալու ծրագիրը:

Նույն այս խորհրդակցությանը վճռվեց, թե ինչ աշխատանքներ է վերցնում իր վրա պիոներական ջոկատը։ Միաձայն կանգ առան յերեք աշխատանքների վրա,—առաջին փորձնական բրիգադների կազմակերպումը գործարանում աշխատելու համար, մասսայական շաբաթվորյակների կազմակերպումը և 3 ցուցադրական կարմիր անկյունների աշխատանքները։ Բավական վիճեցին բռակի, ցուցատախտակների և հաշվառման տախտակների մասին։ Վոմանք կարծում եյին, վոր այդ աշխատանքն ևս պիոներները պիտի կատարեն։ Վեճերից հետո վորոշվեց, վոր ամեն մի հաշվառման տախտակի և ամեն ցուցատախտակի համար պատասխանատու յե լինելու վորոշ ողակ և վորոշ դպրոցական խմբակ։

ՋՈԿԱՏԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ԲՐԻԳԱԴԸ ԿՈԼԽՈԶԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ

— Նախքան պատմելս, թե մեր կարծիքով ինչ կարող ենք մենք անել գյուղում, յես ուզում եմ կարճառոտ պատմել, թե ինչ տեսանք մենք այնտեղ, ինչ դրության մեջ է կոլխոզն ու պիոներ ջոկատը։

— Իսկ գուցե հենց ուղղակի գործին անցնես։

— Իսկ դա մի թե գործ չի։ Ինչպես կարող ենք մենք վճռել, թե ինչ անենք, յեթե չգիտենք, թե ինչ է պահանջվում մեզնից։

— Ճիշտ է. գլխից սկսիր։

— Լավ, ուրեմն լսեք. ինչպես գիտեք, գյուղը, վորի վրա շեֆություն է վերցրել մեր գործարանը, բավական մեծ է,—780 տնից բաղկացած։ Մինչև անցյալ տարվա աշնանը այնտեղ կար 12 տնտեսությունից կազմված մի փոքրիկ կոլխոզ։ Աշնանը գյուղացիք մասսայական կերպով մտան կոլխոզ։

կարճ ժամանակում գրեթե վողջ գյուղը — 640 տնտեսություն կոլխոզումն եր գոնվում։ Բայց հետո մի կողմից կուլակների ազդեցության, մյուս կողմից էլ թեքումների պատճառով մի մասը, վորին սխալ կերպով ստիպել էյին կոլխոզ մտնել, դուրս յեկավ կոլխոզից։ Հիմա կոլխոզում 338 տնտեսություն է մնացել։

Գարնանացանը մեր կոլխոզը կատարել է 100%-ով։ Նա ստացավ մի տրակտոր, մի կալսիչ և ելի մանը գյուղատնտեսական ինվենտար։ Այժմ կոլխոզը բերքահավաքի յե պատրաստվում։

Տեսնելով, վոր կոլխոզում գործը ավելի լավ է գնում,—շատ անհատական տնտեսություններ նորից կոլխոզ են մտնում։ Մենք կարծում ենք, վոր կոլխոզի վարչությունը շատ թույլ աշխատանք է տանում կոլխոզում նոր անդամներ գրավելու գործում։ Նրանք, ովքեր մտնում են,—ինքնահոս ձևով են մտնում։

Անցնենք պիոներական ջոկատին։ Այս տարի ջոկատը կրկնապատկվել է, 32-ից դարձել է 68։ Բայց ջոկատի աշխատանքը կաղում է։ Չեմ վոր կոլխոզային ջոկատի գլխավոր անելիքը, դա պիոներներին և բոլոր յերեխաներին կոլխոզ-շինարարությանը մասնակից դարձնելն է։ Ճիշտ է,—ցանքսի ժամանակ յերեխաները աշխատել են դաշտում, հերկել են, սերմ են հասցրել, կապ են հաստատել հանդում աշխատող կոլխոզ խմբերի միջև,—բայց այդ բոլորը կատարվել է ջոկատից անկախ։ Գարզապես կոլխոզի վարչությունը տվել է հանձնարարություններ և յերեխաները կատարել են։ Մեր առաջին ոգնությունը կոլխոզ ջոկատին այն կլինի, վոր կարողանանք այդ գործը կազմակերպված և ջոկատի միջոցով կատարել։

Հետո, հենց ջոկատի ներսումն էլ, մերոնք չեն կարողանում գործը կարգի գցել։ Հաճախ ողակավարները իրենք էլ չգիտեն, թե ինչ անեն, կամ միայն կոլվարը ամեն ինչ

մենակ ինքն է անում։ Դպրոցումն էլ պիոնիերները բավարար կերպով չեն աշխատում։ Կապ չկա դպրոցի հետ։ Ամեն մեկն իր համար է գործում։

Ահա մոտավորապես այն, ինչ վոր մենք տեսանք անտեղ։ Ինչումն է կայանալու մեր աշխատանքը։ Գործ ինչքան ասեք կա, այնպես վոր մենք պիտի մտածենք, թե ինչը մտցնենք մեր տարեկան ծրագրում և ստուգիչ թվերում։

Ամենից առաջ հենց իրա, կոլխոզի մասին։ Կոմյերիտական բջիջը մեծ ագիտացիոն աշխատանք է ծավալում անհատականներին կոլխոզում ներգրավելու համար։ Մերոնք ուզեցել են խրճիթ-ընթերցարանում «կոլխոզի անկյուն» կազմակերպել, բայց չեն կարողացել — «նկարիչներ չունենք» ասում են։ Մարդ չի յեղել, վոր մի քանի պլակատ ու լոզունգ սարքի։ Իսկ չե՞ վոր մի եդպիսի անկյուն սարքելը մեծ բան չի մեզ համար։ Դե, մենք էլ մեծ տառերով գրեցինք կոլ-

խոզի կանոնադրությունը, ներքին կարգապահության կանոնները, յեկամտի բաշխման պայմանները և այլն։ Բացի դրանից նկարեցինք մի քանի հետաքրքիր պլակատներ և լոզունգներ, վորից հետո անկյունը պատրաստ եր։ Յետո մենք մեր ուժերով կազմակերպեցինք մի յերեկո, զրույց գյուղացիների հետ ու մի խոսքով — ագիտացիա տարանք կոլխոզ մտնելու համար։

— Ի՞նչ է, կարծում ես թե մենք հենց միայն ագիտացիայով պիտի գբաղվենք։

— Չե՛, դու դեռ լսիր։ Վերջ կոլխոզը հիմա պատրաստվում է բերքահավաքի։ Մենք պետք է կազմակերպված կերպով մասնակցենք այդ կամպանիային և հնար յեղածին չափ ոգնենք։

— Ա՛յ, եդ լավ է։ Յես կգնամ. ինչ լավ կլինի դաշտում աշխատելը։

Դե՛, դաշտում աշխատելով դու հազիվ թե մի ոգուտ բերես կոլխոզին։ Բայց ա՛յ, մի ուրիշ բան։ Կոլխոզում հաշվառման գործը



կաղում է։ Գրագետ կոլխոզնիկները քիչ են, իսկ գործը՝ ինչքան ասես։ Պետք է հաշվել և վորոշել բերքի չափն ու այն, թե ամեն մեկին ինչ կհասնի։ Մենք կարող ենք ոգնել այդ գործին։

Գյուղից վերադարձած մյուս պիոները հաղորդեց կոլխոզի պիոներների մի նոր ձեռնարկության մասին։

— Նրանք ուզում են կազմակերպել թռչնաբուծական ընկերություն։ Դա կոլխոզի աշխատանքների մի շրջանն է, վորի կատարումը իրենց վրա յեն վերցնում պիոներները։ Այստեղ էլ մեր ոգնությունը տեղին կլինի։ Լավ կլինի, յեթե հյուսնոցը մի քանի բներ և վանդակներ շինի նրանց համար։ Մի ուրիշ հարց էլ։ — Խրճիթ-ընթերցարանում կա մի փոքր գրադարան, բայց պիոներական ընթերցանության համար գիրքը պիտի ճրագով ման գալ գտնելու։ Ինչքան լավ կլիներ, յեթե մենք գիրք հավաքեյինք և ուղարկեյինք մեր ընկերներին։

Մի վերջին խնդիր՝ վորն արդեն կոմյերիտական բջիջը ձեռնարկել է և մեզ ճնում է ոժանդակել դրան — դա ռադիո-ընդունարան հաստատելն է։ Այդպիսով գյուղը մեր միացյալ ջանքերով կկապվի քաղաքի հետ և կլսի համերգներ, զեկուցումներ ու ռադիո դասեր։

Լուրը մեծ աշխուժ և զվարթություն բերեց բոլորի մեջ։ Սկսեցին վիճել, թե ինչպիսի ռադիո-ընդունարան դնել, — բարձրախոս, լամպային, թե դետեկտորական։

— Այդ կպարզվի իր ժամանակին։ Մեզ պետք է մի քանի գյուղական պիոներների սովորեցնել բանի գցել ռադիոն, վոր թեթև ՁԼասված-քների դեպքում կարգի բերեն։

— Չայն տվեք։ Ցես ուզում եմ մի ուրիշ բան ել առաջարկել։ Մեր Ոսոավիաքիմը մի ջոկատ է ուղարկում գյուղը ՁԼասատուների դեմ պայքարելու։ Պետք է մեր մասնակցությունը այդ գործում ևս հանդես բերել։

— Ճիշտ է, — լսվեցին ձայներ ամեն կողմից։

— Իսկ վոտ կլիներ, յեթե մենք մասսայական շաբաթորյակ կազմակերպեինք գյուղում, մասնակից դարձնելով այնտեղի պիոներներին և անկազմակերպ յերեխաներին — գլուխ բերել մի ոգտավետ աշխատանք։

Այդպես տեղում եյին առաջարկներ իրար յետևից, և վերջը

ՎՈՐՈՇԵՑԻՆ

17. Ուղարկել գյուղ անհրաժեշտ թվով պիոներներ բերքահավաքին ոգնելու, հաշվառման յեվ այլ աշխատանքներով։

18. Հետագայում եվ անհրաժեշտ է կազմակերպել նման ոգնություններ շտապ յեվ հարվածային կարգով։

19. Կազմակերպել մի մասսայական շաբաթորյակ յեվ շաբաթորյակին

ա) փորել յեվ սերմել մի բանջարանոց 2 հեկտ. տարածությամբ։

բ) կոիվ մղել վնասատուների դեմ, հատկապես կոլիզոի այգում։

20. Կոլխոզ ուղարկել 15 բևեռ յեվ 5 վանդակներ թոչնաբուծական ընկերության համար։

21. Ցույց տալ պահանջվող մասնակցություն ռադիո անցկացնելու գործում։

22. Հավաքել 3—4 հարյուր գիրք յերեխաների ընթերցման համար, նվիրելով դրանք խրճիթ-ընթերցարանի գրադարանին։

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

— Իսկ ով պիտի հետևի ծրագրված աշխատանքների կատարմանը։ Ո՞վ պիտի յետ մնացածներին առաջ մղի, և ընդհանրապես ղեկավարի գործը։

Ցես առաջարկում եմ բաղայի, դպրոցի և ակումբի ներկայացուցիչներից մի շտաբ ստեղծել։

— Ինչի՞ շտաբ։ Ուղղակի ամեն ամիս կհավաքվենք մի այսպիսի միացյալ ժողովի և ամեն ինչ կպարզենք։

— Չե՛, եղպես չի լինի։ Պետք է վոչ թե ամիսը մի անգամ, այլ մշտապես ղեկավարություն լինի։ Ցեթե եսոր գրքատարների բրիգադը իր աշխատանքը չկատարեց, հենց վաղն և յեթ պիտի դրանց հուպ տալ։

— Պետք է ղեկավարությունը հանձնել բաղային, իսկ ժամանակ առ ժամանակ պիտի հրավիրել եսպիսի լայնացրած խորհրդակցություններ։

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՑԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ է, վոր բաղայի խորհուրդը պիտի ղեկավարի ստուգիչ թվերի կատարման աշխատանքները, բայց յեկեք պարզենք՝ թե վոնց պիտի հաշվառումը կատարենք և պարզենք՝ թե ով ինչ է արել։

— Ամեն մի ջոկատ, ամեն մի ողակ պիտի ամիսը մի անգամ իրենց կատարածների և ստուգիչ թվերի իրագործման մասին բաղայի խորհրդին տեղեկագիր տա։

— Բաղայի խորհրդում հաշվառման տախ-

տակ սարքել։ Գրել այնտեղ ամբողջ նշված ծրագիրը, գրել ամեն կետի մոտ թե ինչ՝ ումն է հանձնված և ամեն ամիս նշել, թե ինչ է արված։

— Իսկ վորպեսզի ստուգվի, թե ճիշտ են տրվում տեղեկությունները, պիտի «թեթև հեծելազորի» ջոկատ կազմել։

— Ա՛յ, լավ ասիր։ Ցեսս հենց առաջինը կգրվեմ։

— Դպրոցական և պիոներական պատի լրագրերում միշտ ունենալ մի բաժին. — «Պայքար հանուն ստուգիչ թվերի կատարման» վերնագրով, ուր լուսաբանել որինակելի փորձերը, իսկ յետ մնացողներին խարազանել, ոգնել, վոր առաջ շարժվեն։

ՍՏՈՒԳԻՉ ԹՎԵՐԸ—ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

Ակումբի զարդարած դահլիճը լցվում է բազմությամբ, վորի մեծ մասը յերեխաներ են, փոքր մասը հասակավորներ։ Սենյան

առաջարկեց գործարկոմի նախագահին սկսել, քանի վոր դահլիճն արդեն լիքն եր։

Գործարկոմի նախագահը ժողովը բաց արավ։

Բանվորների և յերեխաների միացյալ այս կոնֆերենցիայի որակարգում դրված է մի հարց.—յերեխաների՝ մեր գործարանի սոցիալիստական մրցությանը մասնակցելու ստուգիչ թվերի մասին, վորի համար խոսք է տրվում բազայի խորհրդի նախագահ Սենյային։

Սենյան սկզբում անվստահ և յերկյուղալից, հետո ավելի ու ավելի աշխուժանալով սկսեց, թե ինչպես յեղավ վոր ստուգիչ թվերի մասին միտքը հղացան, ինչի համար են նրանք և ինչպես են կազմված։

— Ստուգիչ թվերը, — վերջացրեց Սենյան, դա մի պարտականություն է, վորը մենք մեզ վրա յենք վերցնում ձեր և վողջ գործարանի առաջ։ Բայց մեզ վրա առնելով այդ պարտականությունը, մենք մեր հերթին ձեր առաջ ենք դնում մի շարք պահանջներ։

Առաջին մեր պահանջը,—կատարեցեք 100%-ով արդիֆինպլանը, ոչ միայն քանակով, այլև վորակով, ինքնարժեքի իջեցմամբ։

Յերկրորդ պահանջ,—ավելի մեծ ուշադրություն դարձրեք յերեխաների դաստիարակմանվրա։ Չէ՞ վոր մենք ձեզ փոխարինողներն ենք։ Ոգնեցեք մեզ կազմակերպելու արտադրական ուսուցումը, տեխնիկական կայան, լավացնելու դպրոցական ուսումը, այնպես, վոր վողջ ավանի յերեխաները գլխովին ընդգրկվեն դպրոցական ցանցում։

ՊԱՅՔԱՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Հետո դուրս յեկան բանվորները, դուրս յեկան դպրոցականները։ Գործարկոմի նախագահը պատասխանելով Սենյային, բանվորների անունից խոստացավ կատարել այն պահանջները, վորոնք առաջադրում են յերեխաները։ Վերջում բանաձև ընդունեցին.— «Շոգեմեքենագործարանի բանվորական կոնֆերենցիան, վողջունելով յերեխաների նախաձեռնությունը, գործարկոմին առաջարկում է մշակել այն բոլոր անելիքներն ու պարտականությունները, վորոնք պետք է կատարեն գործարանային բոլոր կազմակերպությունները մեր յերեխաների համար, իսկ հետո բոլոր այդ կազմակերպությունների անունից պայմանագիր կնքել յերեխաների ներկայացուցիչների հետ, արդիֆինպլանի կատարման համար վերցրած պարտականությունները յերկուստեք հաջող կերպով գլուխ բերելու համար։

> Սեղանի թվեր կազմելը հեշտ է, կատարելը դժվար։ Պրոլետարական յերեխաներ՝ յես մի՞թե մենք ձեր հայրերից հնգամյակի համար մղվող պայքարում։

Այսպես եյին գրել պլակատում, վոր փակցրած եր դահլիճի ճակատին։ Այդ մտքով տոգորված, յերեխաները ցրվեցին տները։

ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մենք մեր պատմությունը այն մասին, թե ինչպես մեր բազան կազմեց իր ստուգիչ թվերը, — վերջացրինք։ Իբրև յեզրակացություն մենք պիտի ասենք, սիրելի ընթերցող, տանք մի քանի խորհուրդներ։

Ստուգիչ թվերը ինքնանպատակ չեն, այլ հայելին են այն բանի, թե ինչպես ավելի լավ կլինի կազմակերպել ջոկատների հասարակական աշխատանքը, ավելի լավ կազմակերպել յերեխաների կոմունիստական դաստիարակությունը։

Ստուգիչ թվերով յերբեք չի սահմանափակվում ջոկատների և դպրոցների մասնակցությունը սոցիալիստական շինարարության ասպարիզում։ Դրանք միայն գլխավոր, հիմնական աշխատանքներն են։ Ուշադիր կերպով նայեցեք կյանքին, աշխուժ կերպով արձագանքեցեք կուսակցության և կոմսոմոլի կանչին, ձեր հասարակական աշխատանքում մտցրեք այն գործերը, վոր առաջադրում է կյանքը։

Ստուգիչ թվերը պիտի կատարենք սոցիալիստական մրցման մեթոդով։ Ամեն խմբակ, ողակ, ունի իր կոնկրետ աշխատանքը, վորը արտահայտված է թվերով։ Այդպիսով հեշտ է հաշվառում կատարել և պարզել, թե ով է յետ մնում և ով առաջանում է։ Հիշեցեք, վոր մեզ մոտ սոցիալիստական մրցությունն է։ Առաջ դնացողների պարտքն է յետ մնացողներին ոգնել և իրենց ուժերը դարձնելով հասարակական ոգնություն՝ բարձրացնել աշխատանքների ընդհանուր մակարդակը։

Յեվ ամենից կարևորը՝ հիշեցեք, վոր ամբողջ մեր աշխատանքը մի հիմնական նպատակ ունի — յերեխաներից կոմունիստներ պատրաստել։ Ձեր ծրագրերը, ստուգիչ թվերը կապեցեք վողջ գործարանի ստուգիչ թվերի, արդիլինպլանի և վողջ բանվոր դասակարգի՝ հնգամյակի համար մղվող պայքարի, սոցիալիզմի համար մղվող մեծ պայքարի հետ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2
Մանոթանք 5
Ի՞նչն և մեղ պակասում 8
Առաջ նայել 11
«Ձեր աշխատանքները չեն յերևում» . . . 14
Զոկատները սկսում են աշխատել 15
Ցեխի վարիչը ճակատը կնճռոտեց 19
Վողջ մանկական մասսան դուրս բերենք հնդամյակի պայքարին 21
Շտաբն աշխատում է 24
Ինչ կարող ենք անել 28
Կուլտ-աշխատանք 33
Ավանում, բանվորի կենցաղում 37
Վորն և հիմնականը 38
Ինչպես բաժանել աշխատանքը 39
Գործողությունների ծրագիրը 43
Զոկատի խորհրդում 48
Ղեկավարություն 56
Հաշվառում և ստուգում 57
Ստուգիչ թվերը մեր պարտականությունն են 58
Պայքար դժվարությունների դեմ 60
Ցեղրափակում 62

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՍՌ
Ա. ԿԻՄ. Ա. ...
ՄՇԱԿ...

ՀՀ Ազգային գրադարան
NL0187381

12 կոп.

7928

Цена 12 ко
У. 14.

В бой за пятилетку

(перев. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10